

**ՏԻԵՁԵՐԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱՅԻ ԵՎ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ
ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ (ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ), ՄՇԱԿՄԱՆ,
ՍՏԵՂԾՄԱՆ, ՓՈՐՁԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ
ՄԱՍԻՆ**

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« » » 2022 թվականի N -Ն

**ՏԻԵՁԵՐԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱՅԻ ԵՎ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ (ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ),
ՄՇԱԿՄԱՆ, ՍՏԵՂԾՄԱՆ, ՓՈՐՁԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տիեզերական գործունեության մասին» օրենքի 6-րդ հոդվածի
1-ին մասի 2-րդ կետով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը
որոշում է.

1.Սահմանել՝ տիեզերական տեխնիկայի և օբյեկտների օգտագործման
(շահագործման), մշակման, ստեղծման, փորձարկման կարգը՝ համաձայն
հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը
հաջորդող օրվանից:

Հավելված

ՀՀ կառավարության 2022 թվականի

-ի N -Ն որոշման

ԿԱՐԳ

**ՏԻԵՁԵՐԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱՅԻ ԵՎ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ (ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ),
ՄՇԱԿՄԱՆ, ՍՏԵՂԾՄԱՆ, ՓՈՐՁԱՐԿՄԱՆ**

1. Սույն կարգով սահմանվում են տիեզերական տեխնիկայի և օբյեկտների օգտագործման (շահագործման) մշակման, ստեղծման և փորձարկման հետ կապված հարաբերությունները:
2. Կարգում գործածվող հիմնական հասկացությունները.
 - **արտադրող՝ տիեզերական գործունեության իրականացման (ծառայությունների մատուցման) ընթացքում տիեզերական տեխնիկայի և օբյեկտների մշակող և ստեղծող,**
 - **շահագործող՝** տիեզերական գործունեություն իրականացնող իրավաբանական անձ,
 - **պատվիրատու՝** իրավաբանական կամ ֆիզիկական անձ, որը արտադրողի հետ կնքված պայմանագրի հիման վրա տալիս է պատվեր՝ ստեղծված կամ մշակված տիեզերական տեխնիկան և (կամ) օբյեկտը ձեռք բերելու համար,
3. Տիեզերական տեխնիկայի և օբյեկտների օգտագործման (շահագործման), մշակման, ստեղծման, փորձարկման աշխատանքները տարանջատվում են հետևյալ փուլերի.
 - գիտահետազոտական աշխատանքներ (ԳՀԱ),
 - Նախագծակոնստրուկտորական աշխատանքներ (ՆԿԱ),
 - տիեզերական տեխնիկայի և օբյեկտների արտադրություն և շահագործման հանձնում:
4. Յուրաքանչյուր փուլի ավարտից հետո պատվիրատուի և արտադրողի մասնակցությամբ կազմվում է կատարված աշխատանքների հանձնման ընդունման արձանագրություն:
5. Տիեզերական տեխնիկայի և օբյեկտների օգտագործման (շահագործման), մշակման, ստեղծման, փորձարկման աշխատանքների կազմակերպման ընթացքում կազմվող փաստաթղթերում օգտագործված տերմինները և սահմանումները պետք է համապատասխանեն ԳՕՍՍ P 53802-210 «Համակարգեր և համալիրներ: Տերմիններ և սահմանումներ» և ԳՕՍՍ P 57945-2017 «Տիեզերական տեխնիկայի մշակման և արտադրության կազմակերպման տեխնոլոգիական ապահովման համակարգ: Տերմիններ և սահմանումներ» ստանդարտների պահանջներին:
6. Գիտահետազոտական աշխատանքների (ԳՀԱ) փուլը իրականացվում է ԳՕՍՍ P 55977 «Տիեզերական տեխնիկայի մշակման և արտադրության կազմակերպման տեխնոլոգիական ապահովման համակարգ: Հիմնական դրույթներ» ստանդարտի պահանջներին համապատասխան:
7. Գիտահետազոտական աշխատանքներ (ԳՀԱ) փուլը ներառում է.
 - տեսական և փորձարարական հետազոտություններ, որոնք իրականացվում են տիեզերական օբյեկտների, տիեզերական գործունեության հետ առնչվող սարք սարքավորումների, նյութերի, տեխնոլոգիաների մշակման, ստեղծման, տեխնիկական բնութագրերի հիմնավորման, կիրառման, շահագործման պայմանների, վերանորոգման լավագույն կամ ընդունելի պայմանների որոշման համար,
 - ԳՀԱ-ի ընթացքում փորձանմուշների մշակում՝ ստուգելու, փորձարկելու, հիմնավորելու համար տիեզերական օբյեկտների, տիեզերական գործունեության հետ առնչվող սարք

սարքավորումների, նյութերի և կոնստրուկցիաների տեխնիկական բնութագրերը շահագործման իրական պայմաններում՝ փորձա-կոնստրուկտորական աշխատանքների տեխնիկական առաջադրանքում և իրական փորձարկումներում ընդգրկելու համար,

- ԳՀԱ-ի արդյունքների հիման վրա երաշխավորությունների մշակում և տեխնիկական առաջադրանքի կազմում:

8. Տիեզերական տեխնիկայի և օբյեկտների

Նախագծակոնստրուկտորական աշխատանքները (ՆԿԱ) պետք է համապատասխանեն և իրականացվեն համաձայն հետևյալ ստանդարտների.

- ԳՕՍՍ P 56470-2015 «Հրթիռա-տիեզերական արտադրանքի կոնստրուկտորական փաստաթղթեր: Ստանդարտացմանը, համապիտանելիությանը և կատալոգացմանը համապատասխանության ուղղությամբ փորձաքննության անցկացման կազմակերպումը և կարգը»,
- ԳՕՍՍ P 58125-2018 «Տիեզերական համակարգեր: Տիեզերական տեխնիկայի արտադրանքի մշակման տեխնոլոգիական ապահովման և արտադրության տեխնոլոգիական նախապատրաստման կազմակերպումը և կառավարումը»,
- ԳՕՍՍ P 58124-2018 “Տիեզերական համակարգեր: Ստեղծվող արտադրանքի արտադրության տեխնոլոգիականության ապահովումը: Հիմնական դրույթներ”:

9. Տիեզերական տեխնիկայի և օբյեկտների էսքիզային նախագիծը պետք է ներառի.

- հնարավոր սկզբունքային լուծումների համեմատական վերլուծություն՝ ելնելով կառուցվածքային, գործառնականության, աշխատանքի ալգորիթմի, ծրագրավորման, վերանորոգման և ինքնարժեքի չափանիշներից,
- ստեղծվող տիեզերական տեխնիկայի և օբյեկտների հետագա կատարելագործման, արդիականացման և համապիտանելիության տեսակետից նախագծային լուծումների հիմնավորումը,
- շահագործման ընթացքում տիեզերական տեխնիկայի և օբյեկտների, նրանց բաղադրամասերի տեխնիկական հսկողության և դիագնոստիկ սարքերի ընտրության հիմնավորումը,
- նախագծվող տիեզերական տեխնիկայի և օբյեկտների, նրանց կառուցվածքների և աշխատանքի սկզբունքների հուսալիության որոշումը՝ տեսական հաշվարկների, փորձարարական աշխատանքների, մակետավորման, մոդելավորման միջոցով այնպիսի ճշգրտությամբ, որը հնարավորություն կտա կանխատեսել ընտրված կոնստրուկտիվ, սխեմատեխնիկական, ծրագրային, տեխնոլոգիական և այլ լուծումների անխափանությունը, կենսունակությունը և երկարակեցությունը:
- տեխնիկական առաջադրանքին համաձայն՝ ՆԿԱ-ի կատարման հաջորդականության ներկայացումը,
- մշակված տեխնիկական լուծումների արտոնագրային և հեղինակային իրավունքների համապատասխանության և մաքրության հիմնավորումը

(լիցենզիաների ձեռքբերում կամ տեխնիկական լուծումների ճշգրտում),

- տեխնիկական առաջադրանքում տրված հիմնական տեխնիկական բնութագրերի, տեխնիկատնտեսական և շահագործողական ցուցանիշների ճշգրտման առաջարկությունների հիմնավորումը:

10. Տիեզերական տեխնիկայի և օբյեկտների տեխնիկական նախագիծը պետք է ներառի.

- Եսթիզային նախագծման փուլում ընտրված տարբերակի նախագծակոնստրուկտորական և ծրագրային փաստաթղթերը,
- համակարգի ծրագրային միջոցների ընտրությունը,
- պատրաստման և նախնական փորձարկման ամբողջական փաստաթղթերը,
- փորձնական օրինակի ամբողջական փաստաթղթերը,
- փորձնական օրինակի նախնական փորձարկման ծրագրի և եղանակների մշակումը,
- փորձնական օրինակի նախնական փորձարկման արդյունքների հիման վրա կոնստրուկտորական, աշխատանքային փաստաթղթերի ճշգրտումը,
- տիեզերական տեխնիկայի և օբյեկտների շահագործման տեխնիկական փաստաթղթերը:

11. Տիեզերական տեխնիկայի և օբյեկտների արտադրության աշխատանքները պետք է համապատասխանեն և իրականացվեն համաձայն հետևյալ ստանդարտների.

- ԳՕՍՍ P 55977 «Տիեզերական տեխնիկայի մշակման և արտադրության կազմակերպման տեխնոլոգիական ապահովման համակարգ: Հիմնական դրույթներ»,
- ԳՕՍՍ P 57944-2017 «Արտադրության տեխնոլոգիական նախապատրաստման միասնական համակարգ: Հիմնական դրույթներ»,
- ԳՕՍՍ P 58125-2018 «Տիեզերական համակարգեր: Տիեզերական տեխնիկայի արտադրանքի մշակման տեխնոլոգիական ապահովման և արտադրության տեխնոլոգիական նախապատրաստման կազմակերպում և կառավարում»:

12. Տիեզերական տեխնիկայի և օբյեկտների արտադրությունը պետք է ներառի հետևյալ գործընթացները.

- ՆԿՄ փուլում մշակված կոնստրուկտորական աշխատանքային նախագծային փաստաթղթերի հիման վրա արտադրական տեխնոլոգիական գործընթացների մշակում և ճշգրտում,
- արտադրվող տիեզերական տեխնիկայի և օբյեկտների բարձր որակի և հուսալիության ապահովման նպատակով տեսական և փորձնական հետազոտությունների միջոցով տեխնոլոգիական գործընթացների կատարելագործում,
- արտադրության անընդհատ ցիկլի և պատրաստի արտադրանքի հանձնման ժամկետների ապահովման կազմակերպում,
- արտադրվող տիեզերական տեխնիկայի և օբյեկտների որակի տեխնիկական վերահսկողության կազմակերպում,
- արտադրական գործընթացի և տեղեկետվական անվտանգության ապահովում:

13. Տիեզերական տեխնիկայի և օբյեկտների օգտագործումը (շահագործումը) պետք է համապատասխանի և իրականացվի համաձայն հետևյալ ստանդարտների.
- ԳՕՍՍ P 56518-2015 «Տիեզերական տեխնիկա: Ստեղծմանը, արտադրությանը և շահագործմանը մասնակցող կազմակերպությունների որակի կառավարման համակարգերին ներկայացվող պահանջներ»,
 - ԳՕՍՍ P 56523-2015 «Տիեզերական համակարգեր և համալիրներ: Շահագործման անվտանգության ապահովման ծրագիր: Ընդհանուր պահանջներ»,
 - ԳՕՍՍ P 52985-2008 «Հրթիռա-տիեզերական տեխնիկայի էկոլոգիական անվտանգություն: Ընդհանուր տեխնիկական պահանջներ»:
14. Տիեզերական տեխնիկայի և օբյեկտների օգտագործումը (շահագործումը).
- Տիեզերական տեխնիկայի և օբյեկտների շահագործման հանձնման ընդունման գործընթացում արտադրողի մասնակցությունը պարտադիր է: Հանձնման ընդունման գործընթացը ավարտվում է արտադրողի և շահագործողի համատեղ հաստատված արձանագրությամբ և 3-օրյա ժամկետում թղթային և էլեկտրոնային տարբերակներով ներկայացվում տիեզերական գործունեության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմնին:
 - Արտադրողը 3-օրյա ժամկետում շահագործողին պետք է փոխանցի շահագործման ընթացքում անհրաժեշտ տեխնիկական փաստաթղթերի ամփոփ փաթեթը:
 - Պատվիրատուի մոտ տիեզերական տեխնիկայի և օբյեկտների նախապատրաստական, աշխատունակության ստուգման, ինչպես նաև կանոնակարգային և վթարավերականգնողական աշխատանքներին արտադրողի մասնակցությունը պարտադիր է՝ համաձայն շահագործման տեխնիկական փաստաթղթերի: